

— Այդ բարբարոսը կարծե՞թ շաբաթ մը մենք իր քովը պիտի մնանք,— ըսաւ,—
շաբաթը չեղած Հայաստանու ճամփան կ'առնանք:

— Բայց այդ ինչպե՞ս կարելի է,— կ'ըսէր Գրիգոր դառնութեամբ:

— Դու կարծես թէ մենք հետեւակ եւ շղթայակապ պիտի դառնանք նոյն
վիճակին մէջ ինչպէս զմեզ բերին այս անհաւատները, իրենց նժոյգներուն վրայ
հեծած իշխանի պէս պիտի մտնենք հայրենիք:

— Չեմ հասկնար միտքդ, աստուած լսէ ձայնդ:

— Հիմա կը հասկցնեմ ես քեզի:

Երբ հասան իրենց դռնամէջի սենեակը՝ որ առանց պատուհանի փոքրիկ ծակ
մը ուներ ուստի նուազ լոյս մը հագիւ կրնար թափանցել ցորեկ ժամանակ, իսկ
հիմա, որ երեկոյին մութը սկսէր էր տիրել մարդու աչք բան չէր տեսներ. Սուրեն
գնաց փոքրիկ ճրագի կտոր մը առաւ, որ պատի ճեղքի մը մէջ պահած էր, եւ
տանելով դիմացի նոյն դիրքով սենեակը՝ պատին քով գետնին աւազը մէկդի
ըրաւ եւ մեծկակ քար մը ցոյց տուաւ:

— Այս քարը տեսա՞ր, Գրիգոր,— ըսաւ,— այս քարը երբ վերցնենք տակը ճամփայ
մը կը գտնենք եւ այդ ճամփան մինչեւ կանանոց կը տանի եւ այն սենեակը, որ
Շէյխի զինարան ու գանձարանն է միանգամայն:

— Դարձեալ չեմ հասկնար, մեր երկուքնուս ինչ օգուտ այն ճամփեն:

— Մեր երկուքնուս այն օգուտը կայ, որ անիծեալ շղթայներէ ազատելնես վերջ՝
կը մտնենք ներս մեզ պէտք եղած մաքուր արաբացի զգեստ, զէնք եւ մեր չորս
տարուան ծառայութեան գինը կառնունք՝ մեր վրէժը կը լուծենք եւ կ'երթանք
մեր ճամփան:

— Բաւական է որ մենք աղատինք ողջ, առողջ, ես իրենց կը շնորհեմ գինն էլ,
վրէժն էլ:

— Ես այդչափ մոռացկոտ չեմ: Բաւական է այսքանը, երթանք մեր հացն ուտենք
ու պառկինք:

Այս ըսելով աւազը վրայ բերաւ, ծածկեց իւր թանկագին քարը ամենայն
զգուշութեամբ, եւ դարձան իրենց սենեակը: